



... (faint, mostly illegible text in Armenian script, likely bleed-through from the reverse side of the page) ...

(Միջին դարեր)

Ս. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

ԳՏՉԱ ՎԱՆՔԻ ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԸ

Արցախի հայությունը, որպես հայ ժողովրդի անբաժանելի մի հատվածը, ստեղծել է իր պատմությունը, որից դժբախտաբար շատ քիչ բան է մնացել պատմական աղբյուրներում: Ահա ինչու առանձնակի արժեք են ներկայացնում այն եզակի ձեռագրերը, որոնք պահպանվել են և մեզ հասել: Դրանցից է 19-րդ դարի 80—90-ական թվականներին Արցախի Դիզակ գավառի Գոռի վանքի Առաքել Կոստանդյանց վարդապետի շուրջ 600 էջանոց, երեք հատորակ ձեռագիրը:

Առաքել վարդապետը ծագումով եղել է նույն գավառի Թաղուտ գյուղից, ստացել է կրոնական կրթություն և մոտ 30 տարի աշխատել Գոռի վանքի վարդապետ:

Ձեռագիրը գրելու առիթը հանդիսացել է, ինչպես նշում է վարդապետը, վանքին կից դպրոցի սան Տողեցի վանառական Հովհաննեսի այցը վանք: Տարիներ անց դառնալով հայտնի վանառական, նա որոշում է նվերներով ու պարգևներով այցելել իր հոգևոր վարժապետին և «Բազում աղերսանօք խնդրեց պարապիլ իր գրաւոր ինչ վաստակս և մնալ ի հետագային, կարոտացեալ ընթերցողացն»¹:

Ինքը՝ երանելի Հովհաննեսը, շրջել էր գյուղից-գյուղ, բնակավայրից-բնակավայր, հավաքել որոշ ձեռագրերի պատառիկներ, մասնավոր պատմություններ ու տեղեկություններ, որոնցից «Կազմվեց մի նվաստիկ պատմություն»: Նրա վաստակը բարձր է գնահատում վարդապետը և մաղթում «Ընթերցողք պատմութեանցս յիւլ խնդրեմ գբարեմիտն Յօհաննես պատանին»²:

Ստեղծված առիթը ոգևորեց վարդապետին և նա «1870 ամի սկսել և 1880 ամի աւարտեալ» իր ձեռագրի 1-ին և 2-րդ մասերը, բաղկացած երկու հատորներից: Այն բարձր է գնահատվել Րաֆֆու և Լեոյի կողմից, որոնք եղել են վանքում, կարդացել և օգտագործել այն որպես սկզբնաղբյուր իրենց պատմական աշխատությունների համար:

¹ Երևանի մատենադարան, ձեռ. 7323, թ. 199:

² Նույն տեղ, թ. 199:

1884 թվականի հունիսին Լեոն Գոիշ վանքում ծանոթացել է Առաքել վարդապետի ձեռագրին և այդ մասին գրել. «Մենք խնդրեցինք նրանցից ցույց տալ իր աշխատությունները: Նա բերեց մի հին քողով կապած փաթեթ: Կարդացինք: Դա էր Տիգուկի մելիքների պատմության սևագիրը, մի մեծահատոր աշխատություն: Գրվածքը գրաբար, ոճը թեթև, դյուրըմբռնելի: Ինչպես հավատացնում է հայր սուրբը, այդ աշխատությունը նա գրել է տասն և ութ տարվա ընթացքում՝ հավաքելով ճշգրիտ տեղեկություններ ժողովրդի ավանդություններից և զանազան աղբյուրներից: Աշխատությունը իսկապես գնահատելի է. գոնե հայր սուրբը իր պատմությանը ազատել է վերջնական անհայտությունից Տողա մելիքների զանազան երեւելի գործերը: Հայր սուրբը ցույց տվեց և իր մի ուրիշ աշխատությունը, որը անվանված է «Պատմություն եկեղեցական անցից»: Բայց առհասարակ Ա. Կոստանդյանցը բավականին հնաւեր և գրաւեր մարդ է և միշտ արտահայտում է գովելի ցանկություն ուսումնասիրել հնությունները, կազմելով զանազան տեղեւորի պատմություններ»³:

Ձեռագիրը արժեքավոր է, քանի որ հեղինակը օգտվել է տարբեր աղբյուրներից՝ պատմագիրներից, պահպանված ձեռագրերից, վիմագիր արձանագրություններից, ավանդություններից առանձին պատմած բանավոր պատմություններից «Հնագույն գրչագրաց և ի զանազան պատմուեց քաղեալ և հաւաքեալ զայսքանս ի հայտ բերի. զի բազում անցք յիմում ժամանակի հղեն, ապա ի պատմունս սոյն գրոց յիշատակեալ կան ի տեղիս-տեղիս թէ պատմեանցս ականատես եղե»⁴, գրել է Առաքել վարդապետը:

Սուրբ հայրը իր ձեռագրում շարադրել է Դիզակի Մելիք Ավանյան տոհմի պատմությունը սկսած նրա հիմնադիր Մելիք Եգանից (Ավանից), մինչև վերջին ներկայացուցիչի՝ Մելիք Ասլանի իշխման ժամանակը: Ձեռագրի այս մասը 1913 թվականին առանձին գրքույկով հրատարակվել է Էջմիածնում «Դիզակի մելիքություն» վերնագրով:

Ձեռագրի մյուս մասում շարադրված են զանազան պատմություններ՝ կապված Դիզակի տարբեր ժամանակաշրջանների դեպքերի հետ: Առաքել վարդապետը ծաղկաբաղ է կատարել հայ պատմիչների աշխատություններից: Լենկ Թեմուրին ավիրված հատվածում, ինչպես նշում է ինքը, «Ծաղկաբաղ կատարեալ Արիստակես վարդապետի գրքից, որը չէ ըստ կարգին շարադրեալ»: Բուն պատմական աղբյուրներից բացի օգտվել է նաև անհայտ, տեղեւորում պահպանված ձեռագրերից «Գտեալ ձեռագիր որումն Ներսէս վարդապետի»:

Առաքել վարդապետը իր նպատակն էր համարում իր հայրենիքի պատմության անհայտ էջերին լույս սփռել խավարից «Թերևս կարիցես նորաստեղծ գոյացու ի լույս ընծայել ի խաւարատալք իմն խորից հրապարակաց աշխարհիս»⁵: Նա օգտվել է Կիրակոս Գանձակեցու, Առաքել Դավրիժեցու, Եսայի Հասան-Չալալյանի աշխատություններից: Ինչպես նաև այն ձեռագրերից, որոնք գրվել և պահպանվել են Գոիշ վանքում, վանքի վարդապետների և եպիսկոպոսների կողմից, որոնց մի մասը արդեն չէր կարդացվում, մի մասն էլ հազիվ էր կարդացվում:

³ Լեո, Երկեր, հ. 8, Երևան, 1985, էջ 12:

⁴ Նույն տեղ, թ. 131:

⁵ Ձեռ. 3881, թ. 11:

Առաքել վարդապետը իր տքնաջան աշխատանքի մասին գրել է, որ նպատակ ունենալով ցույց տալ իր երկրի անցյալի պատմությունը, շրջել է գավառի բոլոր գյուղերը, փնտրել-գտել տարբեր ձեռագրերի պատառիկներ, լսել և գրի առել ծերունազարդ մարդկանց պատմածները: Այդպիսի մի ձեռագրի մասին է նշում նա, որը ճարվել է Հադրութ գյուղում, որից նույնպես որոշ քաղվածքներ է կատարել:

Առաքել վարդապետը հավաքել և գրի է առել Դիզակի տարբեր հնագույն բնակավայրերի պատմական դեպքերի մասին մի ամբողջ շարք ավանդություններ՝ որոնցում շարադրված են տարբեր բնույթի հարցեր: Մեծ ոգեվորությամբ նա նկարագրել է «Հասնաքար» անվանվող վեմի շուրջը եղած ավանդությունը, որը գտնվում է Դիզափայտի ստորոտում:

Ցավով է նշում Առաքել վարդապետը, որ որոշ աղբյուրներ այլևս հնարավոր չէ կարդալ և որ դրանք մնացին «Անվերծանելի»: Այդ մասին նա գրել է. «Զայս մասնատր ինչ պատմագրութիւնս արտագրեցի ի գրչագրաց ճին վարդապետաց. որոնց անուանք են Յովհաննէս և Արիստակէս կար իր կցկտոր և ոսակաւար լեզուաւ շարադրեալ և որոնց ունիւմ տեղեկութեն ի ճնի մատենաց այնքան համառոտ հավաքմամբ գրեալ, և մինչև անգամ անիմանալի մնաց իմաստ ասացելոց»⁶: Նրա վկայությամբ Հադրութում ճարված ձեռագրում նկարագրված է գյուղի 18-րդ դարի քահանաներ Դավթի և Տէր Ստեփանոսի գործունեությունը, նրանց զավակների սիրո պատմությունը:

Ձեռագիրը արժեքավոր է նաև նրանով, որ Առաքել վարդապետը առաջինն է հավաքել և գրի առել այն մի շարք վիմագիր արձանագրությունները, որոնք փորագրված են մելիքների գերեզմանաքարերին, վանքերի, եկեղեցիների պատերին:

Առաքել վարդապետը հավաքել և վանքում պահպանել է մի շարք ձեռագրեր գրված գավառի տարբեր գյուղերում, որոնցում կային արժեքավոր տեղեկություններ այդ գյուղերի անցյալի մղած ազատագրական կռիվների, կառույցների, նշանավոր տոհմերի գործունեության մասին: Նման մի արժեքավոր ձեռագիր է համարել 1602 թվականին գրված Տումի գյուղում և պահպանված մատյանը:

«Կիր մի ձեռագիր ավետարան հույժ գեղեցկագույն, գրված վայելուչ «Ծաղկագրով», կամ այլատեսակ զարդարեալ»⁷: Գյուղի Գրիգոր քահանայի խոստովանությամբ այն տեղական եկեղեցուն է նվիրել Գտիչ վանքի վարդապետ Տէր Սիմոնը: Սակայն քահանան, լինելով տգետ, «չկացեր ընթերցել զառաջաբանուն և զվերջաբանին թերևս մնջոյական խոչընդուկն կարիցի գիտել»: Առաքել վարդապետը մեծ ջանքեր է գործադրում այդ ձեռագիրը ձեռք բերելու և վանքում պահպանելու համար: Այդ արժեքավոր ձեռագրի հետագա ճակատագիրը հայտնի չէ, հետագայում դրանից որոշ քաղվածքներ է կատարել Խաչիկ Դադյան վարդապետը:

Առաքել վարդապետը իր ձեռագրի մի մասը նվիրել է Վարանդայի Մելիք Ծահնագարի տոհմի պատմությանը և մանրամասն նկարագրել նրա հարաբերությունները Փանահ խանի հետ:

Ձեռագրի էջերում մանրամասն նկարագրել է նաև Դիզակի մելիքների կապերը պարսկական շահերի հետ, պայքարը թուրքական նվաճողների դեմ,

⁶ Երևանի մատենադարան, ձեռ. 7823, թ. 31:

⁷ Ձեռագիր, 3881, թ. ԺԵ:

ազատագրական պայքարի դեպքերը, հայրենասիրական շարժման դրվագները:

Զեռագրի 146—156 էջերում նկարագրվում է, որ 1826 թվականին պարսից զորքերը Ամիրխան զորավարի գլխավորությամբ ներխուժում են Արաքսի ափերը, հասնում Շուշի բերդը: Նվաճման, կողոպտման վտանգից պաշտպանվելու համար Դիզակի բնակչությունը բարձրանում են լեռները և ամրանում «Ի բարձրագույն գագաթ լեռինն Դողու, որ գտանի ի արևելյան կողմըն Տիգրափայտ լեռան: Բոլոր գաւարուն Դիզակա ժողովեալ ենտ ի սուրբ վանս Գոչաց»⁸: Այնտեղ էր հավաքվել ամբողջ գավառի բնակչությունը՝ կանայք, երեխաներ, «Մանկաց և տղայոց» և ապավինելով տեղի խիտ անտառներին ու ժայռերին մնացին մինչև աշուն, ազատվելով թշնամու կոտորածից և գերեվարությունից: Պարսիկները բազում տեղերից «Հափշտակեալ տարան զմանկանս և զաղջկանս երկրեն պարսից, հավատացուցանեին և թլփատել յտղանց մահմետական դարձուցանեին»: Թշնամու հրոսակները թալանում, զավթում էին հովիվների ոչխարները, այգու մրգերը, գործում «Գազանաբարո», գեղեցիկ աղջիկներին տանում իրենց մեծավորներին կնության: Ավազակային ջոկատներից մեկը ներխուժեց Դիզակ և սկսեց կատարել ամեն տեսակ չարագործություններ, գյուղերից կանանց ու երեխաներին քշում էին «Իբրև գանասուն, կապեալ զձեռքս, և զոտս» դեպի պարսկաստանի խորքերը: Օգտվելով դրանից ավելի կամայական էին գործում նաև գյուղերի իշխանները և վերակացուները «Զօր ինչ կամեցին գործեին»:

Ամիրխանը չկարողանալով գրավել Շուշին ավելի է կատաղում, սրտնում իր զորքը շրջակա գյուղերը, հրամայելով. «Կործան, համայաջինջ անել» դրանք, չենթարկվողների գլուխը հատել, խոստանալով յուրաքանչյուր զլխի համար տալ 5 ոսկի: Նրանք, ովքեր փորձում էին դիմադրել, իրենց կյանքով էին հատուցում, դիակները դրվում ցգերի վրա:

Դիզակի մեծամեծ իշխանները «Ժողով կացուցին», խորհրդակցեցին և որոշեցին հաշտություն խնդրել, քանի որ զրկվել էին տարեկան բերքից, չունեին ոչ ցորեն և ոչ էլ գարի: Մեկիք Ասլանի ղեկավարությամբ իշխանների և պաշազատների մի խումբ գնալով պարսիկ զորապետի մոտ խնդրեցին վնաս չտալ քրիստոնյաներին, ազատել գերիներին, աքսորականներին թույլատրել վերադառնալու իրենց բնակավայրերը: Ստանալով հրաման՝ այն մասին, որ երկրում կմտցվի կարգ ու կանոն, նրանք վերադարձան, ժողովեցին հասարակությունը, իրազեկ դարձնելով, որ կարող են վար ու ցանք անել, հավաքել բերքը: Մարդիկ իջան լեռներից և գնացին «Պարապիլ ի հունձս և կալս, ժողովել արդիւնս»: Ապա ըստ պայմանի Մեկիք Ասլանը հրամայում է. գավառի գյուղերից հավաքել հացահատիկ և այլ մթերքներ և հասցնել պարսկական զորակայան, որը գտնվում էր Շուշիում: Հավաքած մթերքները բարձեցին «Բեռնակիր գրաստոց» և մի քանի ընտիր «արամբք» հասցրին Շուշվա բերդը, որտեղ տմարդի զորավարի հրամանով նրանց բանտարկում, առավոտյան հատում բոլորի գլուխները և «Բարձեալ ի վերայ գրաստոցն բերին ի գիւղաքաղաքը Դող գեղջն, մենք իսկ ականատես եղանք եղելոյն», նշում է Առաքել վարդապետը:

Լսելով այդ մասին, Դիզակի բնակչությունը, քաջ երիտասարդները թափվելով քարափներում և լեռնացքներում բնաջնջեցին պարսկական զինվորներին, նրանց դիակների վրայից հանեցին մորթիները, տիկ դարձրին,

⁸ Տեա. ձեռ. 7823, թ. 146:

մեջը դարման լցրեցին, «...և կրկին բարձեալ ի վերայ գրաստոց առաքեցին ի Տավրեժ քաղաք և անտեն յուղարկեցին ի շահանիստ քաղաքին Թեհրան ի տեսութ թագաւորին իրեանց»⁹:

Ձեռագրում նկարագրված է նաև Դիզակի հայ բնակչության ազատագրական մարտերը թուրք նվաճողների դեմ: 1828 թվականի ամռանը Արաքս գետի այն կողմ գտնվող երկրից, որը որոշ պատմական աղբյուրներում անվանվում է Ղարադաղ, որի հյուսիսային սահմանը սկսվում է Հաբանդ գավառից, իսկ հարավայինը հասնում Կասպից ծովի ափերը: Այստեղ լցվել, բնակվում էին տաջիկները (թուրքեր), որոնք դրժելով հաշտության մասին իրենց խոստումը, ծածուկ հավաքում և կազմում են ավազակաջոկատներ, առանց իրենց սուլթանին հայտնելու հարձակվում Դիզակի վրա, հարկ դնում բոլոր գյուղերի վրա: Գավառի բնակչությունը ավերումներից պաշտպանվելու համար 1000 հոգուց բաղկացած աշխարհագոր կազմեց: Թուրքերի զորքը չարագործ Իմամ վերդի զորապետի հրամանով հարձակվեց և հասավ Հադրութ գյուղը, որն ուներ բարվոք այգիներ «Անհամար ծառք պտղաբերք»: Գյուղը երկու կողմից փակված է ձորերով, թուրքերը տեղեկանալով այդ մասին, որոշեցին գաղտնի ներխուժել, այդ մասին իմանալով գյուղի բնակիչները լուր են ուղարկում շրջակա գյուղերը՝ իրազեկ պահելով նրանց թշնամու ստոր նպատակների մասին: Նրանք հավաքվեցին, «Միաբանեցին», զորք կազմեցին, փակեցին գյուղի ներքին մուտքը և դիմադրելով կասեցրեցին թշնամու առաջխաղացումը: Պաշտպանվողները պատգամավորներ «Ընտրեցին և արաքեցին ի գիղաքաղաքն Դող» իրազեկ դարձրին մելիքին վտանգի մասին: Մելիք Ասլանի հրամանով կազմվեց կամավորների զորաջոկատ «Ընտիրս զօրաց՝ զի ոչ ավելի քան հարիւր զինորս հետևակս մարդ» օգնության գնալով հասան Հուդրաթի վերին կողմը և աղաղակելով հարձակվեցին թուրքական բանակի վրա, կարծելով, թե հզոր բանակ է օգնության հասնում, թուրքերը ահաբեկվեցին, բայց չնահանջեցին: Մելիք Ասլանը հրամայում է նախապատրաստվել մարտի «Խմբեցաւ պատերազմն երկուանց կողմանց ճակատու ճակատ խաղացին»¹⁰ գրում է Առաքել վարդապետը: Դիզակցիների մի ջոկատ այգիներով գաղտնի անցավ թշնամու թիկունքը, հարվածեց թուրքերին, մեծ զոհեր խլեց, տեսնելով այդ ծանր անկումը թուրքերը ավելի կատաղեցին «Գազանահար կատաղեալ սաստկացուցանեն, աղաղակ երկուց կողմանց բարձրանայր, քաջ-քաջ զինորք աներկիւղ մարտնչէին, Հայոց ազգինս միանգամայն ի հանդես նահատակաէ էին ետեալ և մանավանդ իսկական անեին քան զանարգանս ազգի և ընտանեաց»¹¹:

Երիտասարդների մի ջոկատ, բաղկացած 20 հոգուց, մարտի նետվեց թուրքերի դեմ, մարտն անհավասար էր, նրանք մարտնչում էին քաջարար և ընկնում հերոսի մահով:

Այդ մարտերում աչքի ընկավ Մարութա քահանայի որդի Վարդանը, որը «Կրթյալ, ուսյալ, լայնաթիկունք» երիտասարդ էր, կարողանալով հնարամտորեն իր ջոկատով անցնել թշնամու թիկունքը, հանկարծակի հարվածում է նրանց, խուճապի մատնում: Մարտում զոհվեց քաջ Վարդանը և թաղվեց եկեղեցու բակում, նա ուներ կին և երկու որդի: Մարտերում իր հերթությամբ փայլեց նաև Իսրայել անունով մեկ այլ երիտասարդ՝ «Բարձրա-

⁹ Տեւ. ձեռ. 7823, թ. 146:

¹⁰ Տեւ. ձեռ. 7823, թ. 114:

¹¹ Նույն տեղ, թ. 115:

հասակ և խարոյաշ անկամբ, կրթեալ, հնարագետ»: Առաքել վարդապետը նրան համեմատում է Տարոնի Մուշեղ զորավարի հետ: Իսրայելը նույնպես զոհվեց մարտերում և թաղվեց Վարդանի կողքին: Թուրքերը պարտված նահանջեցին, գյուղը փրկվեց թուրքական ավերումից:

Ազատագրական պայքարին ակտիվ մասնակցել են նաև Տուսի գյուղի բնակիչները: 1827 թվականին պարսկական մի ջոկատ ներխուժելով Դիզակ, անթիվ վնասներ հասցնելով գավառի գյուղերին հասավ Տուսի գյուղը, որն ուներ մոտ 100 տնտեսություն՝ «Նաև իսկ պակասաւորք էին, սակայն ամենքըն սաստիկ քաջք յանտառաբնակք»¹², ունեին վաղուցվա մի թշնամի «ազգ հզօր և զորաւոր մահմետական», որոնք բնակվում էին Արաքսի ափերին, բայց գարնանը գալիս էին Դիզափայտ լեռների արտավայրերը:

Ըստ ավանդության, այդ քոչվոր ցեղերը հնում զորք են կազմել, հարձակվել գյուղի նախնիների վրա և խլել նրանց արտավայրերը, դրանց խիստ դիմադրել են Տունցիների նախնիները, որտեղից էլ ծագել է թշնամանք նրանց միջև: 1827 թվականին Արաքսի դաշտով Դիզակի գյուղերը ներխուժեցին 600 զինվորներից բաղկացած այդ թշնամի ցեղերի զորագնդերը և մի գիշերում ծածուկ եկան ու դիրքավորվեցին գյուղի դիմաց բլրի գերեզմանատան կենտրոնում և սկսեցին հրացաններով կրակել դեպի գյուղը: Գյուղի վրա գնդակները թափվում էր կրակի պես: Տարիքով մարդիկ, երիտասարդները վերցնելով հրացանները «Մտին թիկունս մեծամեծ վիմացն, աներկյուղ ընդդիմացան» թշնամուն: Պարսիկները ավելի ուժեղացրին հարձակումը, սպառնալով ավերել և թալանել ամբողջ գյուղաբնակներին: Երիտասարդներից մեկը Խաչատուր անունով «Բնախն աներկիղ» դիմելով գյուղացիներին ասում է «Թե զինչ կամիք առնել, զի ահա թշնամիք հաւեալ են ի վերայ մեր և կամին բնաջինջ առնել զմեզ և գերել զմանկանս մեր»¹³, ժամանակն է թողնել մեր ընտանեկան գործերը և մինչ ի մահ կռվել թշնամու դեմ, ինքը նստելով սպիտակ ձին սլացավ թշնամու կողմը, իր ջոկատով անցավ պարսիկների թիկունքը, այնտեղից կրակ բացեց նրանց վրա:

Տեսնելով այդ դիմադրությունը, թշնամիները սկսեցին նահանջել, բայց ավազակապետը հրամայեց իր հեծելազորին նորից հարձակվել: Մարտն ավարտվեց գյուղացիների հաղթանակով. գյուղը փրկվեց ավերումից, անօրենները նահանջեցին «Փախուցեալ գնացին»: Խաչատուրի սերունդները այսօր էլ ասքում են Հադրութի շրջանի Տուսի գյուղում և կրում նրա անվամբ ազգանուն: Այդ մարտերը մենք դիտում էինք Գոռի վանքից, նշել է Առաքել վարդապետը:

Առաքել վարդապետը խիստ արժեքավոր էջեր է գրել 19-րդ դարի հայնության հարաբերությունների մասին: Նկարագրելով 1877—78 թվականների ռուս-թուրքական պատերազմի դեպքերը, նա գրել է. «Այնուհետև անսանձ արձակել ընդ ամենայն նահանգս և քաղաքս, սկսան չարչարել դառն կտտանօք հեղուլ զարիւնս ն-ց: Առաջի ծնողն զորդիս գելանել և զանդամ և անանդամ յօղեալ, և մանրագոյն կոտորեալ, զմիսն և հրով խորովեալ, ծնողացն տալին առյուծել, չկամին ուզել սրով զբլւոր մարմինն ծակոռնիին, զողջոյն հանդերձս ն-ց արեամբ ներկեալ լինեին զոմանս մերկացուեալ, ի հանդերձից ուրկանեին ի հար նիզակա խոցոտեալ տանջեին, ինքն կենդանի սրով բանալով զորովայն զփորոտիեն ի քաց թափեին, մանավանդ

¹² Նույն տեղ, թ. 173—174:

¹³ Նույն տեղ, թ. 175:

գտնեին զյղի կանացս ... ոմանց մանուկն կենդանի թողեալ էր առաջի ծնող-
ցն... Արդարեւ գրիչ մեր հիւանդանալ զամ եղելան գրել»¹⁴:

Այդ դեպքերի մանրամասն նկարագրությունը Առաքել վարդապետը
կատարել է իր եղբոր որդու, ռուս-թուրքական պատերազմի մասնակցի
պատմածների հիման վրա. «Յիշեն զօրականք հալոց յորոց-յորոց մինն եղ-
բորորդին իմ, որ էր դրոշակակիր առաջի զօրաց. Նա պատմեր զամենայն
եղեալն. թելոյք քաջամարտք ն-ք. նաև զամ պարագայս պատերազմեն տալ
անօրինաց և զզօրս օսմանեան ն-ք յառաջ վարեին և զամ հնարս յաղթու-
թեան ուսուցանեին, յոյք հնարագետք պատեին զնա»¹⁵:

Զեռագրի 161—184 էջերում գրված է գավառի հայ իշխանների և գա-
վառապետների իշխման և գործունեության մասին մի տարեթվերի մանրա-
մասն աղյուսակ, որը իր իսկ վկայությամբ արտագրել է Շուշեցի Կոստանտին
Ծախեցի ձեռագրից: Այն սկսում է 1725 թվականին թուրքական զորքերի
հարձակումով Ղարաբաղի վրա և վերջանում է 1773-ի դեպքերի նկարա-
գրումով: Զեռագրում կան արժեքավոր տեղեկություններ ռուս գեներալներ
Երմոլովի, Պասկևիչի, Մադաթովի վարած պատերազմական գործողություն-
ների մասին:

Դառն է եղել Առաքել վարդապետի կյանքի վերջին տարիները, քանի
որ վանքին տարբեր վնասներ էին հասցնում ասպատակիչները, տեղական
Բեգերը, նույնիսկ արգելում անասուններ արածացնել դաշտերում և նա
«Ճարհատյալ» հեռանում է իր երկրից «Երթալ օտարություն»: Վանքից հե-
ռանալու մյուս պատճառը նա համարում էր իր ցանկությունը գտնել այն
«պատմությունը», որը գրվել է նախկին վարդապետների կողմից:

1886 թվականի մարտին թողնելով վանքը, Առաքել վարդապետը գնում
հասնում է գավառի դաշտի ստորին մասը, որտեղից էլ մի խումբ վաճառա-
կանների հետ հասնում Լենքորան քաղաք: Նա մանրամասն նկարագրել է
ճանապարհին տեսածը՝ բնակչության կյանքի և սովորությունների մասին:
Այս նկարագրում է Լենքորանի անբարենպաստ պայմանները «Երկինքը
թխպացուրտ մթուք, ամպամած պաշարեալ գերկրեն ընդհիմի տեղալ զձին
ծանրագոյն...»:

Եղանակը լավանալուց հշտո նա ուղևորվում է Արաքսի ափերը, ուր
մութն ընկնելով նրանք շփոթվում են չիմանալով ուր գնալ, մութը մի կող-
մից, մոլորությունը մյուս կողմից «Երկիւղ աւազակաց քան զամ սաստկա-
գոյն ի սիրտս ամենեցուն սարսափ արկաներ»¹⁶: Ցավով գրում է Առաքել
վարդապետը: Մեծ դժվարությամբ նրանք հասնում են Աստարա բնակա-
վայրը, որի անունը ըստ վարդապետի ծագել է հայկական Աշտարակ բա-
ռից, որի շրջակայքում կար մի հին հայկական բերդ իր աշտարակով: Այս-
տեղ էլ նա ճարում է մի հնագույն պատմություն գրված պարսկաստանցի
Փիլիպոս Սարկավազի կողմից, ուր նկարագրված էր այդ բերդի անցյալը,
ըստ որի այն կառուցվել է Արուկի որդի Վաղարշակի թոռ Արտաշեսի կող-
մից պարսիկների դեմ պատերազմների ժամանակ, որը «Ռամիկ լեզու Աս-
տարակս կոչին», այսինքն Աշտարակ: Բերդը մի քանի անգամ վերանորոգ-
վել է, պաշտպանվել նվաճողների դեմ պայքարում:

Զեռագրի 202 էջում նկարագրված է Շամախի քաղաքի բնակչության
1737 թ.-ի ասպատամբությունը Նադիր շահի բռնապետության դեմ, որոնք

¹⁴ Տեւ. ձեռ. 3881, թ. 85:

¹⁵ Նույն տեղ, թ. 110:

¹⁶ Զեռ. 3881, թ. 218:

չեին կամենում ծառայել «Պարսից իշխանությանը», այդ մասին լուր ստանալով, Նադիրը «Փրփրեց, չարագունեց», հրամայեց զորքը շարժել և ճնշել ապստամբությունը, որն էլ խեղդվեց դաժանությամբ:

Առաքել վարդապետը նկարագրել է Լենքորանի և շրջակա շրջանների բնությունը, բնակչության կենցաղը, հավատը, առևտուրը՝ «Շուկան լիքն էր ցորենով, գարով, ձկնով, բրինձով, եղով և պանրով, մանավանդ ձկանց և օգտագործելիք բանջարեղանաց»¹⁷:

Հետո նա Սալյանով հասնում է Բաքու, ուր ապրում էին բազմաթիվ հայ ընտանիքներ Դիզակ գավառից «Նահանգե մերմե, հոյժ բարեպաշտ և հիւրասէր»¹⁸: Բաքվում բնակվող դիզակցիները նրան տվեցին բազմաթիվ նվերներ՝ վեց հարյուր ութի թղթադրամ արծաթե փող, աստվածասեր և բարեպաշտ Դիզակցի Միրզան վանքին նվիրեց երեք հարյուր ութի:

Բաքվից նա գնացել է Միջին Ասիա՝ Գյոյթասիա և նկարագրել շրջանի բնական պայմանները, բնակչության կյանքը, կենդանական և բուսական աշխարհը: Այնտեղից էլ վերադարձել է Գոռիչ վանք:

Զեռագրի վերջում Առաքել վարդապետը կտակել է «Այսինչ փոքրիկ պատմագիրս ազգային ի վանս Գոռչա, ի նահանգին Դիզակա, երկրեն Արցախի. և որ հանդիպինք սորա ընթերցանութ հայրենասեր հոգով: Թող ողորմի ասէ»¹⁹:

Առաքել վարդապետը մեծ ցանկություն ուներ իր ձեռագիրը տպագրված տեսնել, այդ նպատակած այն ուղարկել է Թիֆլիս տպագրության տալու համար: Այդ մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել Հակոբ Լազարյանի՝ Առաքել վարդապետին գրված պատասխան նամակներում (1887 թ.-ին), ուր կարդում ենք. «...Ես վաղուց լսել էի, ձեր անխոնջ աշխատանքի մասին, որ հետաքրքրությամբ թանկագին տեղեկութիւնք հավաքել և յորինել եք ձեր հայիտարթի անցից պատմության...»: Ապա Լազարյանը խնդրում է իրեն որոշ տեղեկություններ գրել Ավան Յուզբաշու ծագման ու գործունեության մասին, Օրբելյան տոհմից մնացյալների, Դիզակի մելիք Սայու (Եսայու) մահվան մասին:

1888 թվականի հունվարին իր երկրորդ նամակում Հ. Լազարյանը գրել է. «Սրբազան հայր Առաքել վարդապետ ձեր երկու պատմաբանական ձեռագրերը անպայման կկորչի, եթե շուտով մեկ նամակ չուղարկեք ինձ որ կարողանամ այն ձեռագրերը ստանամ և ուղարկեմ ձեզ»²⁰:

Զեռագիրը ուղարկվել է Թիֆլիս, ոմն Սաֆուն, որը այն պետք էր տպագրության տար, բայց անհայտ պատճառներով այն չի տպագրվել և մնացել է Լազարյանի մոտ, հետագայում դրանք Մարիամ Լազարյանը նվիրել է Էջմիածնին:

Այսպիսով Առաքել վարդապետ Կոստանդյանցի ձեռագրերի խիստ արժեքավոր, եզակի աղբյուր է Դիզակի, Արցախի, Այունիքի, ինչպես նաև հարակից շրջանների հայության անցյալի, նրանց ազատագրական պայքարի անհայտ էջերի մասին: Այն գիտական լուրջ ուսումնասիրության խիստ պահանջ ունի:

¹⁷ Նույն տեղ, թ. 209:

¹⁸ Նույն տեղ, թ. 210:

¹⁹ Տես. ձեռ. 7883, թ. 225:

²⁰ Հայաստանի պետական պատմական արխիվ, ֆ. 319, ց. 7, գ. 319, թ. 5: